Գ. Հարությունյան - իրավագիտության դոկտոր,
պրոֆեսոր

ԵՐԿՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՐԱՎԱԿԱՆ

1. Խնդրի առաջադրումը

Միջազգային փորձի համակողմանի ուսումնասիրությունը հանգեցնում է այն հետեւությանը, որ երկրի իրավական անվտանգության եւ իրավական կանխատեսելիության ապահովումը դարձել են կայուն զարգացման եւ սահմանադրական ժողովրդավարության ամրապնդման գլխավոր երաշխիքներից մեկը: Տվյալ հիմնախնդրի լուծումը պահանջում է.

1. հստակեցնել քննարկման առարկայի, այն է՝ «իրավական անվտանգություն» եզրույթի բովանդակությունը,

2. բացահայտել իրավական անվտանգության տեղը երկրի ազգային անվտանգության համակարգում,

3. հստակեցնել երկրի իրավական անվտանգության երաշխավորման հիմնական սկզբունքները, նպատակներն ու առաջնահերթությունները,

4. վեր հանել սահմանադրական անվտանգության երաշխավորման առանձնահատուկ բնույթը, հիմնական սկզբունքները եւ դրանց իրացման առաջնահերթությունները,

5. համակարգել երկրի իրավական անվտանգության ներքին եւ արտաքին սպառնալիքները,

6. համակարգային ամբողջականության մեջ բացահայտել երկրի իրավական անվտանգության սահմանադրաիրավական երաշխիքները,

7. հստակեցնել երկրի իրավական անվտանգության մարտահրավերներին դիմակայելու գործում հանրային իշխանության մարմինների անելիքները:

2. Երկրի իրավական անվտանգության բնորոշումը

Անհատի, հասարակության կամ պետության և հանրային կյանքի այս կամ այն բնագավառի անվտանգության սպառնալիքների բնույթից և բովանդակությունից ելնելով առանձնացվում են ազգային անվտանգության տարատեսակ ձևեր՝ ռազմական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավական և այլն: Դրանք փոխկապված են եւ հանդես են գալիս համակարգային ամբողջականության մեջ:

Իրավական անվտանգության բնորոշումը ոչ միայն գիտական մակարդակով, այլեւ նորմատիվ կարգավորումների շրջանակներում որոշակիացման անհրաժեշտություն ունի, քանի որ այն հանդես է գալիս որպես իրավունքի սուբյեկտների իրավական վարքագիծը պայմանավորող կարեւորագույն հանգամանք:

Հայաստանի Հանրապետությունում «երկրի իրավական անվտանգություն» հասկացությունն օրենսդրական մակարդակում դեռեւս հստակեցված չէ: Այդ հասկացությանը հղում է կատարվում սահմանափակ թվով օրենքներում՝ առանց բացահայտելու դրա իրավական բովանդակությունը: Մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է. «Եթե որևէ նորմատիվ իրավական ակտի կամ դրա որևէ դրույթի անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության և պետության համար, **որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը,** ապա համապատասխան մարմինը կարող է հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը»: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված է. «Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ

դրա որևէ դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության և պետության համար, որոնք կխաթարեն այդ **պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը**, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը» /ընդգծումը մերն է-Գ.Հ./:

Համանման ձեւակերպում է առկա նաեւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի 12-րդ մասում:

Միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, պետական կամ հանրային անվտանգության հասկացություններն օգտագործվում են առավել լայն ենթատեքստով եւ հիմնականում առնչվում են ժողովրդավարական հասարակության մեջ մարդու իրավունքների հնարավոր սահմանափակումների շրջանակների հստակեցմանը:

ՀՀ սահմանադրական լուծումներում նույնպես հիշյալ տրամաբանությունն է առկա: Մասնավորապես, 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 25, 31-34, 40-42, 44-47 եւ 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների սահմանափակման հիմք է դիտարկվում նաեւ պետական անվտանգության հանգամանքը:

Մասնագիտական գրականության մեջ եւ միջազգային իրավական պրակտիկայում «իրավական անվտանգություն» հասկացությունը տարբեր կերպ է բնութագրվում: Մի դեպքում այն ներկայացվում է որպես **ներքին և արտաքին սպառնալիքներից անհատի, հասարակության և պետության կենսական կարևոր շահերի /քաղաքական, տնտեսական, հոգեւոր-բարոյական, տեղեկատվական, բնապահպանական, սոցիալական եւ այլն/ իրավական միջոցներով պաշտպանվածության վիճակ**: Մեկ այլ դեպքում այն բնորոշվում է որպես **անհատի իրավունքների և ազատությունների**

ապահովման ու պաշտպանության, հասարակության և պետության պաշտպանվածության, նրանց բնականոն կենսագործունեության՝ օրենքով սահմանված իրավական երաշխիքների համակարգ[1]**:**

Բոլոր դեպքերում ընդհանրականն ու առանցքայինն այն է, որ լայն իմաստով **իրավական անվտանգությունը դիտարկվում է որպես իրավունքի սուբյեկտների /անհատ, պետություն, հասարակություն/ կենսականորեն կարևոր շահերի իրավական պաշտպանվածության (ապահովվածության, երաշխավորվածության) վիճակ, սուբյեկտիվ և օբյեկտիվ բնույթ կրող ներքին և արտաքին սպառնալիքներին իրավական միջոցներով դիմակայելու եւ խախտված շահերի ու իրավունքների վերականգնման հնարավորություն:**

Նեղ իմաստով իրավական անվտանգությունը դիտարկվում է որպես բուն իրավական համակարգի ներքին կայունության, պաշտպանվածության երաշխավորում:

Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ անվտանգությունը, այդ թվում՝ իրավական անվտանգությունը, բազմաֆունկցիոնալ, բազմապլան հասկացություն է, և վերջինիս խնդիրն է **ոչ միայն պաշտպանել սուբյեկտի շահերը, նվազեցնել, փոքրացնել, կանխարգելել, վերացնել վտանգներն ու սպառնալիքները, այլ նաև երաշխավորել առաջընթաց զարգացումը**: Հետևաբար, իրավական անվտանգությունը կարևորվում է ոչ միայն տարատեսակ սպառնալիքներից իրավական պաշտպանության միջոցների առկայությամբ, այլ նաև սուբյեկտների խախտված շահերի վերականգնման գործուն կառուցակարգերի առկայությամբ: Միայն այս պարագայում՝ **մարդու անվտանգ ապրելու իրավունքի երաշխավորման, անհատի, հասարակության եւ պետության ազատ կենսագործունեության իրավական ապահովման ճանապարհով** է հնարավոր երաշխավորել ողջ իրավական համակարգի ողջամիտ և

[1] Մասնավորապես տե՛ս А.А. Фомин, Юридическая безопасность и правовая защищенность: соотношение и взаимосвязь // Журнал российского права, N11, 2005, С. 101-108, А.С. Шабуров, Правовая безопасность в системе национальной безопасности. Вестник ЮУрГУ. Серия "Право", 2015. Т. 15, N3, С.24-30. http://www1.worldbank.org/publicsector/anticorrupt/corecourse2007/attocckx.pdf.

առաջընթաց զարգացումը, իրական նախադրյալներ ստեղծել իրավական, ժողովրդավարական պետության կայացման համար:

Ուշադրության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ իրավական թեմաներով անգլերենով հրատարակվող աշխատություններում «իրավական անվտանգություն» /legal security/ եւ «իրավական որոշակիություն» /legal certainty/ հասկացություններն օգտագործվում են որպես հոմանիշներ եւ **առաջին հերթին ենթադրում են իրավական որոշումների կանխատեսելիություն**: Վերջինս վերաբերում է թե՛ ողջ իրավական համակարգին եւ թե՛ դրա առանձին բաղադրիչների գործունեությանը: Խնդիրը ոչ միայն կանխատեսելի, հստակ սկզբունքների վրա խարսխված իրավական համակարգ ունենալն է, այլեւ իրավական այնպիսի հնարավորությունների ստեղծումը, որոնք կչեզոքացնեն էկզոգեն եւ էնդոգեն հնարավոր բացասական ազդեցություններն այդ համակարգի կենսունակության վրա: Դա վերաբերում է նաեւ իրավական համակարգին առնչվող այնպիսի միջամտություններին, որոնք կարող են նաեւ իրավական առումով հիմնավորված լինել, սակայն ունենան առավել մեծ բացասական հետեւանքներ, ինչը նույնպես դիտվում է որպես իրավական անվտանգության խաթարում: Հենց այս տրամաբանությունից ելնելով են ՀՀ օրենքներում նախատեսվել վերոնշյալ իրավակարգավորումները:

3. Իրավական անվտանգության հայեցակարգը որպես ազգային անվտանգության հայեցակարգի անբակտելի բաղադրիչ

Շատ երկրներ, այդ թվում՝ նաեւ Հայաստանի Հանրապետությունը, չունեն երկրի իրավական անվտանգության հստակ հայեցակարգ: Իրավական անվտանգության հիմնահարցերը միայն մասնակիորեն են տեղ գտնում Ազգային անվտանգության հայեցակարգերում: Դա չի կարող կայուն զարգացման երաշխիք ապահովել: **Երկրի իրավական անվտանգության համալիր հայեցակարգի մշակումը եւ հետեւողական իրացումը դառնում են ժամանակի հրամայականը:**

Մեր կարծիքով, երկրի իրավական անվտանգության հայեցակարգը պետք է ներառի.

ա/ երկրի իրավական անվտանգության երաշխավորման խնդիրները, նպատակներն ու առաջնահերթությունները,

բ/ սահմանադրական անվտանգության երաշխավորման հիմնական սկզբունքներն ու դրանց իրացման առաջնահերթությունները,

գ/ իրավական անվտանգության արտաքին ու ներքին սպառնալիքներն ու դրանց հաղթահարման հայեցակարգային մոտեցումները,

դ/ իրավական անվտանգության ապահովման օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքները,

ե/ պետական իշխանության մարմինների հասցեական անելիքներն իրավական անվտանգության երաշխիքների ապահովման ուղղությամբ:

4. Երկրի իրավական անվտանգության երաշխավորման խնդիրները, նպատակներն ու առաջնահերթությունները

Իրավական անվտանգության առանցքային խնդիրը երկրի սահմանադրական անվտանգության ապահովումն է:

Այդ խնդրի լուծման հիմնական նպատակն է՝ Սահմանադրության գերակայության երաշխավորման ճանապարհով երկրում սահմանադրականության անհրաժեշտ ու բավարար մակարդակի ապահովումը, Սահմանադրության, իրավական համակարգի եւ իրավակիրառ պրակտիկայի միջեւ հնարավոր հակասության հաղթահարումը, մարդու եւ քաղաքացու սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորումը:

Իրավական անվտանգության հիմնական խնդիրներից են նաեւ.

- իրավունքի գերակայության երաշխավորումը,
- իրավական որոշակիության եւ իրավական համակարգի կանխատեսելիության ապահովումը,

- անհատի իրավունակության երաշխավորվածությունը,
- անհատ – հասարակություն – պետություն շղթայի շահերի ներդաշնակության իրավական երաշխավորվածությունը,
- իրավական համակարգի վրա արտաքին եւ ներքին բացասական ազդակների ժամանակին բացահայտումն ու կանխումը:

Իրավական անվտանգության այլ նպատակներն ու կոնկրետ առաջնահերթությունները պայմանավորված են կոնկրետ ժամանակահատվածում երկրի իրավական համակարգի առկա վիճակով եւ սահմանադրական օրինականության հաստատման հրամայականներով:

5. Սահմանադրական անվտանգության երաշխավորման հիմնական սկզբունքներն ու դրանց իրացման առաջնահերթությունները

Սահմանադրական զարգացումների ընդհանուր տրամաբանությունից ու սահմանադրականության հաստատման արդի հրամայականներից հետեւում է, որ սահմանադրական անվտանգության երաշխավորման հիմնական սկզբունքների թվին կարող են դասվել.

- սահմանադրական հավասարակշռության յուրաքանչյուր խախտման ժամանակին բացահայտումը, գնահատումը եւ հաղթահարումը,
- Սահմանադրության գերակայության երաշխավորման համակարգի գործունակության ապահովումը,
- մարդու սահմանադրական հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորվածությունը,
- իրավունքով իշխանության սահմանափակման սկզբունքի կարգախոսային բնույթի բացառումը:

Այդ սկզբունքների իրացման հիմնական առաջնահերթությունները, մեր կարծիքով, հանգում են հետեւյալներին.

- արդյունավետ պառլամենտարիզմի ու արդարադատության առկայությունը,

- սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը,

- քաղաքացիական հասարակության եւ ազատ մամուլի առկայությունը,

- սահմանադրական մշտադիտարկման գործուն համակարգի սահմանադրաիրավական ու կառուցակարգային երաշխիքների ապահովումը:

Այս առաջնահերթությունների իրացումը պետական քաղաքականության առանցք դառնալու պարագայում կարող են երաշխավորել երկրում սահմանադրական ժողովրդավարության կայուն ու դինամիկ զարգացում:

6. Երկրի իրավական անվտանգության արտաքին եւ ներքին սպառնալիքները

Երկրի իրավական անվտանգության սպառնալիքները կարող են լինել արտաքին եւ ներքին:

Իրավական անվտանգության արտաքին սպառնալիքներից են.

- միջազգային բոլոր հնարավոր իրավական քայլերը /այդ թվում՝ միջազգային ու տարածաշրջանային մակարդակներում երկկողմ ու բազմակողմ փաստաթղթերի ընդունումը/, որոնց հետեւանքները կարող են վտանգել երկրի ինքնիշխանությունը, հակասել Սահմանադրությանը,

- միջազգային կազմակերպություններում երկրի շահերի ոչ բավարար իրավական պաշտպանությունը,

- արտաքին քաղաքական լուծումների հնարավոր բացասական իրավական հետեւանքները,

- միջազգային իրավական ատյաններում երկրի ու նրա սուբյեկտների շահերի պաշտպանության իրավական եւ կառուցակարգային երաշխիքների անբավարարությունը,

- պետության միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ մշտադիտարկման բացակայությունը:

Երկրի իրավական անվտանգության **ներքին սպառնալիքները** վերաբերում են իրավական ողջ համակարգում առկա բացերին, անհստակություններին, ներքին հակասություններին, գործառութային ու կառուցակարգային ոչ լիարժեք գործունակությանը:

Երկրի իրավական անվտանգության թիվ մեկ ներքին սպառնալիքը սահմանադրականության դեֆիցիտն է:

Միջազգային զարգացումների ներկա համայնապատկերը վկայում է, որ նոր հազարամյակում մարդկությանը պատուհասած շատ չարիքներ՝ ահաբեկչություն, հազարավոր մարդկանց բռնի տեղահանումներ, անկառավարելի միգրացիա, կոռուպցիա, սոցիալական ծայրահեղ շերտավորում, սոցիալական ու տնտեսական անկայունություն, քաղաքական-տնտեսական-վարչական ներուժի սերտաճում, մարդու իրավունքների բազմաբնույթ ոտնահարումներ, իրավունքի գերակայության սկզբունքի ոչ լիարժեք իրացում եւ այլն, մեծապես պայմանավորված են սահմանադրականության դեֆիցիտով, Սահմանադրության արժեբանության, հիմնարար սկզբունքների ու նորմերի եւ իրական կյանքի միջեւ առաջացած խզումով:

Սահմանադրականությունը բնութագրվում է իրական կյանքում սահմանադրական հիմնարար արժեքների, սկզբունքների ու նորմերի գործողության, պետաիշխանական հարաբերություններում սահմանադրական հավասարակշռության պահպանման աստիճանով, մարդու հիմնական իրավունքների երաշխավորման, ապահովման ու անմիջական գործողության մակարդակով, իրավունքով հանրային իշխանության սահմանափակվածության իրողությամբ:

Սահմանադրականությունը հանդես է գալիս որպես հասարակության սոցիալական վարքագծի բնութագրման **ընդհանուր իրավական սկզբունք:** Սահմանադրականությունը, ինչպես եւ իրավունքն **օբյեկտիվ սոցիալական իրողություն են,** սոցիալական հանրության քաղաքակիրթ համակեցության աստիճանի վկայությունը՝ տվյալ

հանրության կայուն եւ դինամիկ զարգացման երաշխիք: Ուստի խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ այնպիսի սոցիալական համակարգի ձեւավորմանը, որում Սահմանադրությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման:

Սահմանադրականության երաշխավորումը պահանջում է հաղթահարել հնարավոր խզումը Սահմանադրության, իրավական համակարգի եւ իրավակիրառական պրակտիկայի միջեւ: Պետության համար առաջնային խնդիր է դառնում հանրային հարաբերությունների սահմանադրականացումը:

Իրավական անվտանգության լրջագույն ներքին սպառնալիք են անհետեւողական ու անհամարժեք մոտեցումներն իրավունքի գերակայության սկզբունքի իրացմանը:

Այս խնդրի առնչությամբ ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային մոտեցումը եղել է այն, որ իշխանությունն իրականացնելիս ժողովուրդը և պետությունը պետք է սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով:

Անկախ «իրավունքի գերակայություն» հասկացության տարակերպ մեկնաբանություններից, միջազգային իրավական պրակտիկայում առկա է իրավունքի գերակայության տարրերի միասնական ընկալում: Դրանք վեցն են.

- օրինականությունը,
- իրավական որոշակիությունը,
- կամայականության արգելքը,
- անկախ եւ անաչառ դատարանների կողմից արդարադատության իրականացման արդյունավետությունն ու մատչելիությունը,
- մարդու իրավունքների հարգումը,
- անխտրականությունը եւ օրենքի առջեւ բոլորի հավասարությունը:

Այս տարրերի իրավական բովանդակությունը հանգում է նրան, որ.

- պետք է հարգվի ու երաշխավորվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,
- օրենքները և այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, զերծ բացերից ու երկիմաստություններից,
- հանրային իշխանության իրականացման հիմքում պետք է ընկած լինի օրինականության սկզբունքը եւ իշխանության իրականացումը պետք է խարսխված լինի գործառույթների ու լիազորությունների ներդաշնակումը երաշխավորելու վրա,
- պետք է երաշխավորվի կամայականության արգելքի սկզբունքը և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները,
- արդարադատությունը պետք է լինի անկախ ու անկողմնակալ,
- մարդու իրավունքները սահմանադրորեն ամրագրված, օրենսդրորեն երաշխավորված, համարժեք կառուցակարգային լուծումներով ապահովված ու պաշտպանված պետք է լինեն,
- պետությունը պետք է պոզիտիվ պարտականություն կրի իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հարցում և ստանձնի համարժեք հանրային-իրավական պատասխանատվություն,
- հիմնական իրավունքներին ցանկացած միջամտություն և իշխանության ցանկացած գործողություն պետք է բխեն համաչափության սկզբունքից,
- իրավական վեճերը պետք է ունենան բացառապես իրավական ճանապարհով արդյունավետ լուծման անհրաժեշտ կառուցակարգեր:

Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը ենթադրում է փոխպայմանավորված ու փոխլրացնող այս բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայություն:

ՄԱԿ-ի եւ եվրոպական տարբեր կառույցների կողմից ընդունված հիմնարար մոտեցումն այն է, որ իրավունքի գերակայությունը հավասարապես կիրառելի է բոլոր երկրների ու միջազգային կազմակերպությունների համար, այն վերաբերելի է

ամբողջ իրավական համակարգին, իրավունքով իշխանության սահմանափակման ու մարդու իրավունքների պաշտպանության բոլոր դրսեւորումներին:

Անցումային հասարակական համակարգերի համար սկզբունքային նշանակություն ունեն իրավունքի գերակայության եւ օրենքի գերակայության հասկացությունների հստակ սահմանազատումը եւ սահմանադրաիրավական մակարդակում ու իրավակիրառ պրակտիկայում իրավունքի գերակայության երաշխավորումը[2]: Այս հարցում կարեւոր դերակատարություն կարող է ունենալ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2016 թվականի մարտի 106-րդ լիագումար նիստի կողմից հաստատված «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկի» հիման վրա ծրագրանպատակային քաղաքականության իրականացումը[3]:

Իրավական պետության մեջ անձի սոցիալական վարքագծի, քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի եւ իշխանության մարմինների հանրային վարքագծի հիմքում պետք է դրված լինի իրավունքի գերակայության սկզբունքը:

Անցումն անձնիշխանությունից ժողովրդավարության միայն սահմանադրական կամ օրենսդրական նոր լուծումներով պայմանավորված չէ: Նախ այդ լուծումներն ինքնին համակարգային նոր որակ ու ամբողջականություն պետք է ունենան: Սակայն գլխավոր խնդիրն այն է, թե դրանք իրական կյանքում ինչպիսի փոփոխությունների են հանգեցնում: Տրանսֆորմացիան կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ իրավունքի գերակայության ինդեքսը կրիտիկականից բարձր մակարդակ չի հավաքել: Վերափոխումների արդյունավետության գնահատման հիմնական չափանիշը կարող է բնութագրվել բացառապես իրավունքի գերակայության ինդեքսի համարժեք աճով:

---

[2] Մասնավորապես տե՛ս Sergey Holovaty, "The Concept of the Rule of Law" Difficulties of its Perception in the Post-Soviet Legal Culture. Almanac Constitutional justice in the new millenium 2016, p. 47-59. Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները: Երեւան, 2016, էջեր 449-466:

[3] Տե՛ս Г. Арутюнян, Роль Контрольного списка верховенства права в системе конституционного мониторинга /Концептуальные подходы/, //Международный вестник "Конституционное правосудие", 2016, N3/73/. С. 164-174.

Հատկապես անցումային երկրների համար լրջագույն սպառնալիքներից են ստվերային կառավարման առկայությունը, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սահմանադրական սկզբունքի ոչ հետեւողական ու ոչ ամբողջական իրացումը:

Վերջինս հանգեցնում է սուբյեկտիվ հայեցողության թելադրանքի: Այն իշխանության չարաշահման ու կոռուպցիայի հիմնական պատճառներից մեկն է դառնում: Տեղի է ունենում քաղաքական, տնտեսական եւ վարչական ներուժի սերտաճում, ինչն իր հերթին ազգային անվտանգության մեծագույն սպառնալիք է:

Երկրի իրավական անվտանգության ներքին սպառնալիքներից է անվստահությունը դատական իշխանության նկատմամբ:

Սահմանադրաիրավական պահանջն այն է, որ **արդարադատություն իրականացնելու ճանապարհով** դատարանները պետք է.

- հակակշռող եւ զսպող դերակատարություն ունենան իշխանությունների բաժանման համակարգում՝ կատարելով սահմանադրորեն իրենց վերապահված պետաիշխանական առաքելությունը,
- նպաստեն իրավունքի զարգացմանը, օրենքի բացի հաղթահարմանը, իրավական որոշակիության երաշխավորմանը,
- պաշտպանեն մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու հիմնարար ազատությունները,
- երաշխավորեն օրենքի միատեսակ կիրառումը:

Այս առաքելությունը պատշաճ չկատարող եւ, այսպես կոչված, «ընտրողաբար» ու սուբյեկտիվ հայեցողությամբ արդարադատություն իրականացնող դատական իշխանությունը չի կարող հանրային մեծ վստահություն ունենալ, ավելին՝ ինքն է դառնում երկրի իրավական անվտանգության սպառնալիք:

Երկրի իրավական անվտանգության սպառնալիք է նաեւ իրավագիտակցության ցածր մակարդակը:

Այն դրսեւորվում է ոչ միայն բնակչության տարբեր շերտերի շրջանում, այլեւ պետաիշխանական համակարգի տարբեր մակարդակներում: Վերջինիս առավել վտանգավոր դրսեւորումներից են, երբ սահմանադրաիրավական հստակ պահանջը ենթադասվում է քաղաքական նպատակահարմարությանը, երբ արժեզրկվում կամ անտեսվում են սահմանադրական նորմերը, երբ տիրապետող է դառնում սուբյեկտիվ հայեցողականությունը՝ թե' պետաիշխանական իրավասությամբ օժտված մարմինների հանրային վարքագծում եւ թե' առանձին քաղաքացիների ու նրանց խմբերի սուբյեկտիվ վարքագծում:

Որպես երկրի իրավական անվտանգության ներքին սպառնալիք է հանդես գալիս նաեւ իրավական անվտանգության վիճակի համակարգային մշտադիտարկման բացակայությունը կամ անլիարժեքությունը:

Ներկա միջազգային զարգացումների հոլովույթում առավել հրատապ են դառնում սահմանադրական մշտադիտարկման ու սահմանադրական պատասխանատվության համակարգերի արմատավորումը ու դրանց գործունակության երաշխավորումը: Սահմանադրական մշտադիտարկման ու իրավունքի գերակայության երաշխավորման ինդիկատորների մշակման փորձեր են կատարվել ՄԱԿ-ի կողմից /հրապարակվել է 2011 թվականին/, ինչպես նաեւ Վենետիկի հանձնաժողովի կողմից /հրապարակվել է 2016 թվականին/: Նման ինդիկատորների առավել ամբողջական համակարգ է առաջարկվում «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի կողմից[4]: Վերջինիս գործնական կիրառումը հնարավորություն կտա վերահսկելի դարձնել վերոշարադրյալ սպառնալիքների հաղթահարման գործընթացը:

[4] Տե'ս. G. Harutyunyan, Constututional Culture: the Lessons of History and the Challenges of Time. 2017, p. 454-478. Международный вестник "Конституционное правосудие", 2016, N4/74/, էջեր 7-35:

7. Երկրի իրավական անվտանգության սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում

Երկրի իրավական անվտանգության սահմանադրաիրավական երաշխիքներն առաջին հերթին ամրագրվում են Սահմանադրության նորմ-նպատակների, նորմ-սկզբունքների եւ կոնկրետ իրավահարաբերություններ կանոնակարգող նորմերի տեսքով՝ իրենց հիմքում ունենալով սահմանադրական արժեբանությունից բխող հիմնարար մոտեցումները:

Հայաստանի Հանրապետության իրավական անվտանգության սահմանադրաիրավական առաջնահերթությունների մեջ առանցքային նշանակություն է ստանում սահմանադրական անվտանգության ապահովումը՝ սահմանադրական օրինականության հաստատման ճանապարհով: Վերջինս հնարավոր է Սահմանադրության գերակայության երաշխավորման գործուն համակարգի առկայության, սահմանադրական պատասխանատվության համակարգի արդյունավետության եւ սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունն ապահովելու պայմաններում: Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն այս հարցերի լուծման առնչությամբ որակական նոր նախադրյալներ են ստեղծել:

ՀՀ Սահմանադրությունն իրավական անվտանգության հիմնախնդրին անդրադառնում է մի քանի առումով:

Նախ՝ հստակեցվում է պետության սահմանադրաիրավական բնույթը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչելով որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, ինչից պետք է բխեն անմիջական եւ ներկայացուցչական ժողովրդավարության գործառութային ու կառուցակարգային լուծումները:

Երկրորդ՝ սահմանադրորեն պաշտպանվում է ժողովրդաիշխանությունը՝ իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից համարելով հանցագործություն /հոդված 2, մաս 3/:

Երրորդ՝ սահմանադրական կարգի հիմունքների շրջանակներում անփոփոխելի սահմանադրական նորմով ոչ միայն ամրագրվում է հանրային իշխանության պարտականությունը մարդու իրավունքների հարգման ու պաշտպանության հարցում, այլեւ սահմանվում է ամբողջ իրավական համակարգի համար անկյունաքարային նշանակության այն հիմնարար սկզբունքը, համաձայն որի՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» /հոդված 3, մաս 3/:

Վերջինս ենթադրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ողջ իրավական համակարգը պետք է կառուցվի իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքի վրա, իշխանությունը պետք է սահմանափակվի իրավունքով եւ պետք է անհրաժեշտ երաշխիքներ ապահովվեն մարդու իրավունքների անմիջական գործողության համար:

Միաժամանակ, Սահմանադրության անփոփոխելի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են»: Սահմանադրական այս պահանջից է նաեւ բխում **անձի անվտանգ ապրելու սուբյեկտիվ իրավունքը եւ հանրային կյանքի անվտանգության իրավունքը**:

Չորրորդ՝ սահմանադրական պահանջ է, որպեսզի պետական իշխանությունն իրականացվի Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա /հոդվ. 4/:

Այս հանգամանքը երկրի իրավական անվտանգության տեսանկյունից բացառիկ նշանակություն է ստանում հատկապես վերափոխվող պետական համակարգերում,

որտեղ թե՝ իշխանությունների բաժանման եւ թե՝ հավասարակշռման հարցում մարտահրավերներն առավել ակնառու են:

Հինգերորդ՝ ՀՀ Սահմանադրությունը պետության սահմանադրաիրավական անվտանգության առումով հստակեցնում է իրավական ակտերի աստիճանակարգությունը /հոդվ. 5/ եւ սահմանում է օրինականության սկզբունքը, համաձայն որի, մասնավորապես, սահմանվում է, որ «Պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով» /հոդված 6, մաս 1/:

Վեցերորդ՝ երկրի քաղաքական համակարգի համար առանցքային դերակատարություն ունեցող քաղաքական կուսակցությունների առնչությամբ նույնպես Սահմանադրությունը սահմանում է, որ «Կուսակցությունների կառուցվածքը եւ գործունեությունը չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին» /հոդված 8, մաս 4/:

Պետության իրավական անվտանգության տեսանկյունից բացառիկ նշանակություն ունեն սահմանադրական մոտեցումները հիմնական իրավունքների երաշխավորմանը, ապահովմանն ու պաշտպանությանը: Այս առումով սկզբունքային նշանակություն ունեն, մասնավորապես, Սահմանադրության 75, 78, 79 եւ 80-րդ հոդվածները: Դրանցով սահմանվում են.

Հոդված 75. Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հոդված 80. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Իրավական պետության եւ ժողովրդավարական հասարակության համար այս նորմերը համարվում են «ոսկյա կանոններ» եւ սկզբունքային նշանակություն են ձեռք բերում պետության իրավական անվտանգության մակարդակի գնահատման համար:

8. Երկրի իրավական անվտանգության մարտահրավերներին դիմակայելու գործում հանրային իշխանության մարմինների անելիքները

Սահմանադրության գերակայության երաշխավորումը

Մեր երկրում սահմանադրական զարգացումների տրամաբանությանը համարժեք նոր խնդիրներ են ի հայտ գալիս հասարակական հարաբերությունների սահմանադրականացման եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման հար-

ցերում: Վերջինս պահանջում է նաեւ մտածողության ու մոտեցումների որոշակի վերանայում՝ թե՛ պետական կառավարման եւ թե՛ օրենսդրական քաղաքականության մակարդակներում:

Նոր ժողովրդավարության երկրներում վերջին տասնամյակների հանրային զարգացումների ընդհանուր տրամաբանությունն էր անձնիշխանությունից, տոտալիտարիզմից ձերբազատվելը, անցումն ազատական սահմանադրական ժողովրդավարության՝ պետական իշխանության այնպիսի համակարգի, որը հիմնված է սահմանադրական սկզբունքների վրա: Դա հնարավոր էր առաջին հերթին համարժեք սահմանադրական բարեփոխումների ճանապարհով, ինչին ձեռնամուխ եղան բոլոր նորանկախ երկրները: Հայաստանի Հանրապետությունը սահմանադրական զարգացումների երեք փուլ անցավ՝ 1995-ին ընդունելով Սահմանադրությունը եւ այն փոփոխելով 2005 եւ 2015 թվականներին:

Բոլոր երկրների համար սահմանադրական զարգացումների առաջնային խնդիրը սահմանադրականության երաշխավորումն է՝ Սահմանադրության գերակայության ապահովման ճանապարհով: Այս խնդրի լուծումը նույնպես նոր մոտեցումներ է պահանջում: Նախորդ դարավերջի հետպատերազմյան սահմանադրական զարգացումների բնորոշ գծերից էր, որ անհրաժեշտություն առաջացավ **առավել հստակ հակակշռել ու զսպել օրենսդիր ու գործադիր իշխանությունները՝ դատական իշխանության համարժեք դերակատարությամբ:** Դա սահմանադրական ժողովրդավարության հաստատման հրամայականն էր, ու այդ իրավասությունը դրվեց սահմանադրական ու համարժեք գործառույթով օժտված դատարանների վրա: Գերմանիայում, Իտալիայում ֆաշիզմի հաստատումը եւ տարբեր եվրոպական երկրներում դիկտատուրայի տարատեսակ արմատավորումը պատճառաբանվեցին հենց նման հակակշռման անբավարար մակարդակով: 1948թ.՝ Իտալիայի, 1949թ.՝ Գերմանիայի, 1958թ.՝ Ֆրանսիայի, 70-ականներին Հունաստանի, Պորտուգալիայի, Իսպանիայի սահմանադրական զարգացումների համար առանցքային էր դատական իշխանության հակակշռող դերի մեծացումը՝ որպես անձնիշխանության հաղթահարման ճա-

նապարհ: Նույն բանը տեղի ունեցավ 1990-ական թվականներին Արեւելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ տարածքի երկրներում: Սահմանադրության գերակայության երաշխավորման համակարգային զարգացումների հետագա միտումները գնացին սահմանադրական դատարաններ դիմող սուբյեկտների ու քննության օբյեկտների ընդլայնման եւ հիմնական իրավունքների սահմանադրական պաշտպանության ամրապնդման ուղղությամբ: Տիպական են 1969թ. սահմանադրական զարգացումները Գերմանիայում, 1972թ. սահմանադրական բարեփոխումները Ֆրանսիայում, 2005 եւ 2015թթ. սահմանադրական փոփոխությունները Հայաստանում:

Եվրոպայում հետպատերազմյան ժամանակաշրջանի զարգացումները սահմանադրական իրավունքում ներկայումս բնորոշվում են որպես առաջընթաց քայլ՝ անցում կատարելով իրավունքի գերակայության սկզբունքից Սահմանադրության գերակայության սկզբունքին, իրավական պետությունից /Rechtsstaat/ սահմանադրական պետության /Verfassungsrechtsstaat/ սկզբունքին, օրինականության /légalité/ սկզբունքից սահմանադրական լեգիտիմության /légitimité constitutionnelle/ սկզբունքին: Այս գործընթացով է հիմնականում բնութագրվում մեր ժամանակների եվրոպական սահմանադրականության զարգացման ընդհանուր տրամաբանությունը:

Եվրոպական սահմանադրական զարգացումների նոր տրամաբանությունը փոխեց նաեւ պատկերացումները դատավորի ու նրա դերի մասին: Դատավորը դադարեց ընկալվել միայն որպես օրենքը կիրառող, նա հանդես եկավ նաեւ որպես օրենքը «դատող», օրենքը մեկնաբանող, օրենքի նկատմամբ վերահսկողություն իրականացնող: Սահմանադրական պետությունում արդարադատությունն է գնահատում իշխանության մյուս ճյուղերի գործառույթների իրականացման իրավաչափությունը՝ դրանց սահմանադրականության բացահայտման ճանապարհով: Սահմանադրական դատարանն այդ առաքելությունն իրականացնում է մյուս դատարանների աջակցությամբ, որոնք նաեւ Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ են ու Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման կարեւորագույն դերակատար:

Եվրոպական սահմանադրական զարգացումների հիմնական տրամաբանությունն է եւ այն, որ որպես իրավունքի աղբյուր նոր որակ են ստանում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանն է ուղղորդում օրինաստեղծին առաջնորդվել սահմանադրականության ճանապարհով, գործել սահմանադրորեն: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները դառնում են սահմանադրական իրավունքի կարեւորագույն աղբյուր եւ գերակա տեղ են զբաղեցնում իրավունքի աղբյուրների համակարգում: Միաժամանակ, պետական քաղաքականության առանցքային խնդիր է դառնում Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի իրացման երաշխավորումը՝ իրավաստեղծ գործունեության մեջ ու իրավակիրառ պրակտիկայում:

Եվրոպական սահմանադրական զարգացումների այս միտումները եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական վերջին փոփոխությունները պահանջում են **դատական իշխանության անկախության նոր մշակույթի ձեւավորում, անկախություն, որը կոչված է երաշխավորելու Սահմանադրության գերակայությունը՝ իրական կյանքում իշխանությունների գործակցության սահմանադրական հավասարակշռության երաշխավորման եւ ինքնասահմանափակման սկզբունքով առաջնորդվելու շրջանակներում:** Այս խնդրի լուծումն առաջին պլան է մղում Սահմանադրական դատարանի որոշումների կատարման երաշխավորված իրավական համակարգ ունենալու անհրաժեշտությունը: Այնպիսի համակարգ, որը կապահովի.

ա/ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմի գործողության դադարման հետեւանքների արագ հաղթահարումն ու Սահմանադրությանը համարժեք իրավակարգավորման երաշխավորումը,

բ/ իրավական անորոշության ու իրավակարգավորման բացի արագ հաղթահարումը,

գ/ իրավակիրառական պրակտիկայում եւ իրավաստեղծ քաղաքականության մեջ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների լիարժեք իրացումը,

դ/ խախտված սահմանադրական հավասարակշռության բացահայտման, գնահատման ու վերականգնման անընդհատության երաշխավորումը սահմանադրական մշտադիտարկման ճանապարհով:

Այդ նպատակով պահանջվում է համարժեք իրավակարգավորումներ նախատեսել ոչ միայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում, այլեւ «ՀՀ կառավարության մասին» օրենքում, դատավարական օրենսգրքերում ու իրավական այլ ակտերում:

<u>Իրավական մշտադիտարկման իրականացումը</u>

Վերջինս պետք է ներառի սահմանադրական մշտադիտարկումը[5], օրենսդրության եւ իրավակիրառ պրակտիկայի մշտադիտարկումը, երկրի միջազգային իրավական պարտավորությունների կատարման մշտադիտարկումը: Այն պետք է իրականացվի համակարգային ամբողջականության մեջ, կրի շարունակական բնույթ՝ նպատակ ունենալով բացահայտել, գնահատել եւ հաղթահարել խաթարված իրավական ներդաշնակությունը: Այս հարցում պետք է հստակեցվեն հանրային իշխանության մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Անհրաժեշտ է նաեւ մշակել իրավական մշտադիտարկման մեթոդական լուծումներն ու ցուցիչների համակարգը:

<u>Իրավաստեղծ գործունեության արդյունավետության բարձրացումը</u>

Իրավաստեղծ գործունեության մեջ առաջնային նշանակություն ունի Ազգային ժողովի օրինաստեղծ գործունեությունը: Վերջինիս արդյունավետության բարձրացման

[5] Այդ մասին մանրամասն տե՛ս. Գ.Գ. Հարությունյան, Սահմանադրական մշտադիտարկում, Երեւան, 2016թ., էջեր 11-131:

համար 2015թ. սահմանադրական փոփոխություններն ստեղծել են անհրաժեշտ նախադրյալներ: Դրանց հետեւողական իրացումը պահանջում է.

- էապես բարձրացնել ՀՀ Ազգային ժողովի դերն օրինաստեղծ քաղաքականության մշակման ու իրականացման, ազգային կուռ օրենսդրական համակարգի ստեղծման գործընթացում,

- առավել հետեւողականորեն հաղթահարել օրենքների ու տարբեր իրավահարաբերությունների իրավակարգավորման առկա բացերը՝ հաղթահարելով նաեւ այն պրակտիկան, ըստ որի՝ օրենքի բացը լրացնելու գործում շեշտը դրվում է բացառապես նոր օրենսդրական ակտերի ընդունման վրա՝ թերագնահատելով իրավունքի կամ օրենքի անալոգիայի, ինչպես նաև պաշտոնական պարզաբանման եւ դատարանների նախադեպային իրավունքի դերը,

- բարձրացնել իրավակարգավորումների գիտական հիմնավորվածության մակարդակը՝ հանրային հարաբերությունների զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների բազմագործոն բացահայտման ու գնահատման ճանապարհով, մշակել օրենսդրական կարգավորումների հստակ հայեցակարգային չափորոշիչներ, բացառել Սահմանադրությանը հակասող իրավանորմերի կամ ակտերի ընդունումը,

- խուսափել տարբեր երկրների իրավակարգավորումների մեխանիկական փոխառման, այսպես կոչված՝ ՀՀ իրավական համակարգում «փոխպատվաստման», հնարավոր դրսեւորումներից,

- երաշխավորել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի լիարժեք իրացումը, իրավակիրառողի համար իրավակարգավորումները դարձնել առավել հստակ ու կանխատեսելի,

- ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջի հիման վրա հիմնական իրավունքները եւ ազատությունները կարգավորելիս սահմանել դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր ու ընթացակարգեր:

Գործադիր իշխանության իրավաստեղծ եւ իրավակիրառ գործունեության արդյունավետության բարձրացումը

Այս ոլորտում հրատապ խնդիրներն են.

- ՀՀ գործադիր իշխանության ողջ համակարգում պետք է երաշխավորվի ենթաօրենսդրական իրավական ակտերի սահմանադրականությունը,

- պետք է բարձրացվի իրավաստեղծ գործունեության կայունությունը եւ թափանցիկությունը, ենթաօրենսդրական իրավական ակտերի մատչելիությունը, բացառվի օրենքներին, սահմանադրական օրենքներին եւ ՀՀ Սահմանադրությանը հակասող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունումը,

- միջազգային իրավական պարտավորություններ ստանձնելիս առավել մեծ ուշադրություն պետք է դարձվի դրանց հեռահար հետեւանքներին,

- անհրաժեշտ է արմատավորել իրավական լուծումներում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ու գնահատման արդյունավետ գործող համակարգ,

- պետք է իրականացվի օրենքների եւ ենթաօրենսդրական իրավական ակտերի կատարման վիճակի շարունակական ու արդյունավետ մշտադիտարկում՝ համարժեք ազգային համակարգի ներդրման միջոցով,

- հանրային իշխանության մարմինները պետք է աստիճանաբար ձերբազատվեն մասնավոր ձեռնարկատիրությանը բնորոշ ծառայություններ մատուցելու գործառույթներից,

- անհրաժեշտ է բացառել հանրային իշխանությանը բնորոշ գործառույթներն ու լիազորությունները ոչ պետական մարմիններին վերապահելու պրակտիկան,

- էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը նոր որակ ու բովանդակություն պետք է ստանա:

Արդարադատության նկատմամբ հանրային վստահության ամրապնդումը

Այս ոլորտում պահանջվում են արմատական փոփոխություններ: Երկրում ստեղծված իրավիճակը հաշվի առնելով՝ սահմանադրական բարեփոխումների արդ-

յունքում առաջ քաշվեցին համալիր մոտեցումներ, որոնք գործառութային ու կառուցակարգային հիմնարար փոփոխություններ են նախատեսում: Վերջիններիս իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական ու կառուցակարգային երաշխիքների ստեղծման պայմաններում հնարավոր կդառնա.

- ունենալ անկախ, ինքնուրույն եւ օրենքի առջեւ հաշվետու դատական համակարգ,
- ապահովել դատական իշխանության գործառութային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախությունը,
- արդարադատության հիմքում դնել իրավունքի գերակայության երաշխավորումը,
- երաշխավորել սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը,
- հաղթահարել դատարանակազմական լուծումների, դատավարական ընթացակարգերի թերությունները, սուբյեկտիվ հայեցողության շրջանակները, կոռուպցիոն ռիսկերը,
- երաշխավորել դատական իշխանության գործառութային ամբողջականությունը:

Այս ոլորտում միայն օրենսդրական փոփոխությունները բավարար չեն: Սահմանադրական լուծումները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել նոր մոտեցումները կյանքի կոչելու ամբողջական երաշխիքներ ստեղծելու ուղղությամբ:

Կարծում ենք, սույն հոդվածում առաջ քաշված մոտեցումներն օգտակար կարող են լինել երկրում իրավական անվտանգության հայեցակարգի մշակման ու իրացման հարցում՝ ինչն անհետաձգելի անհրաժեշտություն է: